Պետերբուրգ. Պ. Նախարարին Ներքին Գործոց Սատաս—սեկրետար Սօլիպինին.

Պետական Դումայում Բեսարաբիայի պատգամաւորը ամբիոնից նեռել է հայ հոգևորականութեան և իւր հօրի հասցէին անջատական ձգտումների և յեղափոխական միտումների մեղադրանք։

Բոլոր ուժով բողոքելով անվայել յարձակումների դէմ, որ թոյլ է տուել ժողովրդական ներկայացուցիչը ամբողջ երկրի առաջ, համարձակւում եմ Ձերդ Բարձր Գերազանցութեան ուշադրութիւնը հրաւիրել յայտնի պատմական փաստերի վրա, որոնք ապացուցանում են Բարձր հոգևորականութեան և նրանց զաւակների—հայ ժողովրդի—անպայման անձնուիրութիւնը դէպի Մեծ Հովանաւորողը քրիստոնեաների աբևելքում, գեռ նախքան հայոց աշխարհի Ռուսաստանին միանալը։

Այդպիսի մեղադրանքներն ու անփաստ յարձակումները ՆՈՐԻՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ Կովկասի Փոխարքայ Վորոնցով Դաշկովի դէմ, որ իր իմաստուն, մարդասէր կառավարութեամբ դրաւել է Կովկասեան ազգաբնակութիւնների ընդհանուր սէրը, խորապէս վիրաւորեցին Հաւատարիմ հայ հոգեւորականութեան զգացմունքները։ Որպէս վերջնիս ներկայացուցիչ պարտք եմ համարում խոնարհաբար խնդրել Ձեզ արկանել առ ոտս ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ, Ինքնակալ Թնամակալի հայ եկեղեցու յուզուած անսահման սիրով բաւախող և անձնուէր որդիների զգացմունքները առ Մեծ Ռուսաստանի փառապանծ գահի Միապետները. 21 դեկտ.

Տեղակալ Կաթուղիկոսի ամենայն Հայոց

Դէորգ Արքեպիսկոպոս Սարենեան.

ՔԱՂՈՒԱԾՔ ՅՕՐԱԳՐԱՅ ՕՐՆՕԴԻ

— Ի 6-ն Հոկտեմբերի Սինոդ առեալ ի նկատ զի տգէտ քահանայք շրջանին Ապարանայ միանդամայն ա-

պաշնորհ և անդօր գտանին ի վարումն պաշտաման գործակալութեան տեղի տալով յաճախ այլ և այլ զեղծմանց քահանայից և նոյն իսկ երբեմն ինքնին կանխելով ի նոյն մեղս ի վնաս շահուց Մայր Աթոռոյ, ուստի հրամայեաց առաջադրել Փոխ-Թեմական ին Հայոց Երևանայ արձակել զԹորէն քահանայ Մկրտչեան ի պաշտամանէ գործակալութեան Ապարանայ, կարգելով յայն պաշտօն զմինն յազատ միաբան վարդապետաց Մայր Աթոռոյս: Հ. 735.

— Ց 8-ն նոյն ամսոյ Սինօդ լուեալ զբողոք պ. Կ. պ Պրօկուրօրի և առեալ ի նկատ զանվայել վարման Գրիգոր ա. քահանի Սուքիասեանց ի գործի մեղադրանաց Վահան քահանայի Մամիկոնեան և զանպատկառ հայհոյաբանութիւն նորա զհոգևոր իշխանութենէ, ի նամակին, զոր առաջի արարեալ է Մատթէոսի Շահպազեանց, հրամայեաց զրկել զԳրիգոր ա. քահանայն Սուքիասեանց ի քահանայագործութենէ եռամսեայ ժամանակաւ և առաքել ի վանս Գեղարդայ յապաշխարութիւն: Հ. 771.

— Ի նմին աւուր Սինօդն հաստատեաց զեզրակացութիւն կոնսիստորիային Շամախւոյ, որ վասն արկանելոյ զԳէորգ քահանայն Աւագեանց Մէյսարի գեղջ ընդ հրնդեասան ռուբլի տուգնօք յօգուտ արկեղ որբոց և այրեաց հոգևորականաց թեմին, ի պատճառս չճանաչելոյ զպարտիս իւր վասն կանոնաւոր գործադրութեան արձանագրական մատենից. հակառակ վերջին ազգարարութեան կոնսիստորիայի դարձեալ թոյլատրեալ է զմիևնոյն օրինաղանցութիւն թողլով բոլորովին առանց գործադրութեան զչափաբերական մատեան եկեղեցւոյն Մէյսարի գեղջ յընթացս ամրողջ 1907 ամի: Հ. 743.

— Ի 10-ն նոյն ամսոյ Սինօդ լուեալ զյայտարարութիւն Մեսրոպ արքեպիսկոպոսի Սմբատեան միաբանի Մայր Աթոռոյ, որով յայտնէ եթէ Գարեգին ք. Ասրիան Մոզդոկ քաղաքի ի «Մշակ» լրագրի ի 25 մայիսի տարւոյս № 115 ի յօդուածի, կաթուղիկոսական հարցի շուրջը, անուանէ զմիաբանութիւն Մայր Աթոռոյ «Կոյր», հրա-

մայեաց զԴարեգին ք. Ասբեանց արկանել ընդ եկեղեցական ապաշխարութեամբ առ դրանն եկեղեցւոյ յընթացս երկուց եօթնեկաց։ Հ. 759.

— Ի 13-ն նոյն ամսոյ առ առաջադրութիւն Տ. Տեղակալ Ատենապետի Մինոյն հրամայեաց յայտ առնել Նորին Ամենապատուութեան եթէ որպէս երևի ի գործոց հաշուարարական մասին Սորին, գանձարան Մայր Աթոռոյ յետ վիրաւորելոյ աւազակաց զգանձապահ համազասպ վարդապետն, յառաջին նուագի բացեալ է, ի 16-ն սեպտեմբերի տարւոյս ի ներկայութեան ամենայն անդամոց Մինոյիս։ Հ. 763.

— Ի նմին աւուր Մինոյն զՓիլիպոսեայ և Խաթունարխ հողոց, որք ի Վաղարշապատի, աճուրդն կայացեալն յ9 հոկտեմբերի տարւոյս, հաստատ, ի վերայ Սրմաժատայ Զաքարեան հնգամեայ ժամանակաւ, ի տարին 5405 ռ։ Հ. 764.

— Ի 15-ն նոյն ամսոյ Մինոյն հրամայեաց միջնորդել առաջի նախարարութեան Ներքին Գործոց ըստ մտաց 1214 յօդ. 1 մ. XI հատ. Օր. զի ընկալցի զբարձրագոյն հաճութիւն վասն ընդունելոյ ի սեպհականութիւն ազգաթատան Հայոց Խարկովի զնուիրաբերեալն ի Գրիգորէ Դաւթեան զտուն, ազատ կացուցանելով զազգաթատունն յամենայն հարկաց և ծախուց, որ վասն հաստատելոյ զօրինական կալուածագիրն։ Զվճռոյս տալ տեղեկութիւն կոնսիստորիայի Նոր-Նախիջևանի և Ռեսսարաբիոյ։ Հ. 765.

— Ի նմին աւուր Մինոյ լուեալ զմիջնորդութիւն կոնսիստորիայի Հայոց Վրաստանի համեմատ վճռոյ ծխական ժողովոյ Տափի թաղի ս. Գէորգայ եկեղեցւոյ Տրփխեաց և ըստ 1215 յօդ. 1 մ. XI հատ. Օր. ի խնդրել ի ձեռն Տ. Փոխարքային Կովկասու զԲԱՑՁՐԱԴՈՑՆ թոյլտուութիւն դնել ի գրաւ ի դրամական հաստատութիւնս զկրպակս եկեղեցւոյն վասն ընդունելոյ անտի զկարևոր դումար դրամոց մինչ ց25000 ռուբլի, ի ծախել զայն յա-

ւարտ վերանորոգութեան եկեղեցւոյն և ընկալեալ ի կատարողէ պաշտաման Փոխարքային զթոյլտուութիւն, հրամայեաց թոյլ տալ դնել ի գրաւ զկրպակս եկեղեցւոյն առ յընդունել ի պարտ ռուբլիս 25000 ի պէտս աւարտման շինութեան եկեղեցւոյն։ Հ. 766.

— Ի նմին աւուր լուեալ զյայտարարութիւն վիճ. կոնս. Նոր-Նախիջևանի և Ռեսսարաբիոյ վասն սատարելոյ Արտակ վարդապետի յապաքինումն «սուր ոսկրացաւ» հիւանդութեան ի մասնաւոր հիւանդանոցի յՕդեսսա քաղաքի, հրամայեաց պատուիրել կոնսիստորիային Նոր-Նախիջևանի և Ռեսսարաբիոյ տալ ի վիճակային արդեանց միանուագ ի նպաստ Արտակայ վարդապետի ի պէտս բժշկութեան ռուբլիս 150։ Հ. 767.

— Ի 24 նոյն ամսոյ Սինոդ ի վերայ հիման առաջադրութեան զՏ. Տեղակալի Ատենապետի կարգէ ժամանակաւոր պաշտօնակատար Փոխ թեմակալի Երևանայ զՏ. Հմայեակ վարդապետն ի տեղի Տ. Յուսիկ Աբքեպիսկոպոսի, որ հաստատեալ է անդամ Սինոդի։ Հ. 806.

— Ի 5-ն նոյեմբերի Սինոդ լուեալ զզեկուցումն զՀողոյ Տայլարու հրամայեաց. նախ՝ քանզի որպէս երևի ի յայտարարութենէ Հոգևոր կառավարութեան Կարուց ի 11 հոկտեմբեր ամսեան անցելոյ թ. 1266 կապալառու Հողոցն Տայլարու Միքայէլն Մուռուզեանց չէ հատուցեալ զկապալավարձն վասն 1905, 1907 և 1908 ամաց, որով խախտեալ է զ5 յօդուած դաշնագրին, ուստի զդաշնագիրն ըստ 6 յօդ. նորին համարել ոչնչացուցեալ. երկրորդ՝ պատուիրել Հոգ. Կառավ. Կարուց գրաւել զգրաւական Մուռուզեանցի ի գումարի 410 ռուբլեաց, որ եղեալ է յաւանդ յարքունի գանձարանին Կարուց ընդ անդորրագրաւ թ. 7613, պահանջել ի նմանէ ի ձեռն դատարանի, եթէ ոչ տայէ յօժար կամաւն զ2460 -- վարձադրամս վասն 1905, 1907 և 1908 ամաց և զսահմանեալ տուգանս ըստ 6 յօդ. դաշնագրին և երրորդ՝ պատուիրել նոյն Հոգևոր կառավարութեան հանել զՀողոն

ծայլարու ի վարձակալութենէ Մուսուլեանցի յընդունելն զհրամանս զայս և նշանակել նոր աճուրդ վասն տալոյ զհողն ի վարձու այլոց ցանկացողաց։ Հ. 823.

— 37-ն նոյն ամսոյ լուաւ զեկուցումն առ ի դիւրացուցանել զպաշտօն գործավարաց դիւանատան Սինօդի և ի ծանօթս լինել հանգամանաց գործոց յաղագս դնելոյ ի ժամ զեկուցման նոցին զուղիղ և գօրինական վճիռս։ Որովհետև հաստատութեամբ նորոց անդամոց լրացեալ է ամբողջ կազմն Սինօդի, հրամայեաց ճանաչել զանդամն Սինօդի Հոկոդս զՏ. Բարգէն վարդապետն կրկին ի վերայ դատաստանական մասին, զՏ. Մատթէոս վարդապետն ի վերայ հաշուարարական մասին, զՏ. Մեսրոպ վ. ի վերայ տնտեսական մասին և զՏ. Յուսիկ Արքեպիսկոպոսն ի վերայ կառավարչական մասին։ Հ. 824.

— Ի նմին աւուր լուեալ Սինօդն զյայտարարութիւն հոգաբարձութեան թեմական դպրանոցին Հ. Երևանայ յՅ սեպ. թ. 5. հրամայեաց զկառավարութիւն և զարդիւնս Ամաղու վանից ժամանակաւորապէս յանձնել հոգաբարձութեան թեմական հոգևոր դպրանոցին Հայոց Երևանայ ցառանձին տնօրէնութիւն, պատուիրելով ամի ամի ներկայացուցանել կոնսիստորիային Երևանայ զհաշիւ մտից և ելից վանուցն։ Հ. 825.

— Ի նմին աւուր լուեալ Սինօդն զյայտարարութիւն կոնսիստորիային Երևանայ ի 24 հոկտ. տարւոյս թ. 4651, որով խնդրէ զտնօրէնութիւն Սինօդի վասն թոյլտուութեան պատկի բնակչի Ղարաջորան գեղջ գաւառին Էջմիածնի Ջալալի Դալատեան բնդ Ասանէթի Կարապետեան այսու ճիւղագրութեամբ.

այր և բ. կին — այր և ա. կին — քոյր և եղբ.

Հերիքնազ — Դալուստ — Մահի — Կարապետ

Բ. կին (վախճ.)

Ջալալ — կամի առնուլ — Ասանէթ.

հրամայեաց. թոյլ տալ զպսակ Ջալալի ընդ Ասանէթի ի վեցերորդ աստիճանի խնամութեան։ Հ. 826.

Ի 20-ն նոյն ամսոյ Սինոդ թոյլատրեալ է զպսակ Դալատի Մարտիրոսեանց ընդ Հայկանուշի Երամեանց բնակչաց Վարդաշէն գեղջ Նուխուոյ գաւառի ի հինգերորդում աստիճանի խնամութեան հանդերձ խորդութեամբ։ Հ. 801.

— Ի նմին աւուր ի վերայ հիման յայտարարութեան վանահօրն Խցկոնից վանուց հրամայեաց. քանզի Աբրահամ վարդապետն Դասպարեան է հպատակ Օսմանեան Տէրութեան և խնդիր նորա վասն ընդունելոյ ի հրպատակութիւն Ռուսիոյ թողեալ է առանց հետևանաց, իսկ վանքն Խցկոնից ոչ կարէ պահպանել զնա և հոգալ զապրուստ նորա, ուստի պատուիրել Հոգևոր Կառավարութեան կարուց հատուցանել նմա ռուբլիս 50 ի վիճակային արդեանց ի ծախս ճանապարհի և առաջադրել նմա անյապաղ անկանել յուղի ի վանուցն անտի ի Թուրքիա ի վանս որոյ է միաբան, առանց մնանելոյ ի Ս. Էջմիածին։ Հ. 802,

— Ի 22-ն նոյն ամսոյ Սինոդ լուեալ զյայտարարութիւն Ներսէս վարդապետի Մելիքթանգեան հրամայեաց նախ՝ պատուիրել կոնսիստորիային Նոր-Նախիջևանի և Բեսսարաբիոյ հատուցանել Ներսէս վարդապետի Մելիքթանգեան ի ռոճիկ ռուբլիս 50 յամիսն սկսեալ ի 1-էն առաջիկայ նոյեմբերի և երկրորդ՝ ծանուցանել վանահօրն Ս. Խաչ վանուց Խրիմու, եթէ ազատ է նա սկսեալ ի 1-էն նոյեմբերի ի պարտուց հայթայթելոյ զսնունդ Ներսէս վարդապետի։ Հ. 804.

Ամուսնալուծութիւն.

— Ի 6-ն հոկտեմբերի լուեալ զդործ ամուսնալուծութեան Եղիշեայ Ղալթուղչեանց Ալեքսանդրապոլցւոյ ընդ Վարդուհւոյ Սիմէոնեանց հրամայեաց. քանզի յարաբերալ քննութեանցն երևի անհաւատարմութիւն Վարդուհւոյ Սիմէոնեան ուխտի ամուս-